Պարույր Սևակ

Թութակի կարոտ

Ես հոգնել եմ, շա՜տ:
Ու կան վայրկյաններ,
Երբ ես ասում եմ.
-Էլ քեզ չե՛մ սիրում:
Սակայն ասում եմ այնքա՜ն մտքիս մեջ,
Ասես կողքիս ես և լսես պիտի:
Իսկ մեզ յո՜թ միլիոն մետր է բաժանում:
Ու մինչև անգամ եթե դու լսես,
Մի՞թե կլինես այնքա՜ն միամիտ,
Որ ինձ հավատաս:
Այդպես հեշտ ու շուտ հավատացողին
Իրո՛ք չեմ սիրում:
Բայց ինչո՞ւ եմ զուրկ,
Ես ինչո՞ւ եմ զուրկ
Բոլոր հաճելի թուլություններից.
Ո՛չ հավաքում եմ իրեր հին ու նոր,
Ո՛չ ձուկ եմ բռնում, ո՛չ որսի գնում,
Ծառ պատվաստելու ցանկություն չունեմ,
Ու տանս մեջ էլ շներ չեմ սնում...
Գոնե տանս մեջ... թութա՜կ պահեի:
Ու թե տանս մեջ թութակ պահեի՝

Կվարժեցնեի ես նրան հիմա,
Որ վաղնջական գուշակի նման
Մի՞շտ ու շարունակ միա՛յն կրկրներ.
-«Էլ քեզ չե՞մ սիրում»...
Սակայն զուրկ եմ ես
Բոլոր օգտակար թուլություններից
Ես զուրկ եմ այնքա՛ն,
Որ մինչև անգամ
Թութա՞կ պահելու թուլություն չունեմ:
Եվ ապաստանած լոկ մի թուլության,
Որ սեր է կոչվում
Եվ գլխիս վրա դարձել է... տանիք
Ու... գլխարկի պես գլխիս է դրվել,
Ապրում եմ այսպե՛ս
Ես այսպե՛ս քայլում՝
Գլխարկի՛ տեղակ... գլխիս մի տանի՞ք.
-Մի նո՛ր խեղկատակ,
Որին չե՞ն տեսնում,
Իսկ թե տեսնում են՝
Ինչո՞ւ չեն հապա քրքրջում վրաս...

06.XI.1964թ.
Երևան